ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2024 թվականի N 2080 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-Ի N 1744-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը, պայմանները, չափորոշիչները, աջակցության քարտի ձևը և տրամադրվող գումարի չափը սահմանելու, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն և հոկտեմբերի 29-ի N 1292-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» N 1744-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման վերնագրի՝

ա. «ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԻ ՁԵՎԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՏԱՐԵՑ ԵՎ (ԿԱՄ) ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ» բառերը փոխարինել «ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԽՆԱՄՔԻ ՁԵՎԵՐԸ,» բառերով,

բ. հանել «, ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ» բառը.

2) որոշման նախաբանում «13-րդ հոդվածի 12-րդ մասի, 30-րդ հոդվածի 3-րդ մասի» բառերը փոխարինել «26-րդ հոդվածի 7-րդ մասի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի» բառերով.

3) որոշման 1-ին կետում «Սահմանել» բառը փոխարինել «Հաստատել» բառով, իսկ 1-ին կետի 1-ին ենթակետում «և պայմանները» բառերը փոխարինել «, պայմանները և տրամադրվող խնամքի ձևերը» բառերով.

4) որոշման 2-րդ և N 2 հավելվածի 84-րդ կետերից «սոցիալական հոգածության» բառերը հանել, N 1 հավելվածի 7-րդ կետում «Սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնում (այսուհետ՝ ցերեկային կենտրոն)» բառերը փոխարինել «Ցերեկային կենտրոնում» բառերով, N 2 հավելվածի 1-ին կետում «սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնները (այսուհետ՝ ցերեկային կենտրոն)» բառերը փոխարինել «ցերեկային կենտրոնները» բառերով, իսկ N 1 հավելվածի 6-րդ գլխի, N 2 հավելվածի 5-րդ, 7-րդ և 10-րդ գլուխների վերնագրերից «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԱԾՈՒԹՅԱՆ» բառերը հանել.

5) որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությունում «2025 թվականի հունվարի 1-ից» բառերը փոխարինել ««Սոցիալական աջակցության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետում նշված խնամքի տրամադրման նվազագույն չափորոշիչները սահմանող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից» բառերով.

6) որոշման 6-րդ կետի 1-ին ենթակետում՝

ա. «7-րդ» բառը փոխարինել «6-րդ» բառով,

բ. «սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված սոցիալական աջակցության» բառերը փոխարինել «սոցիալական աջակցության ոլորտում պետական լիազոր մարմնի հաստատած խնամքի տրամադրման նվազագույն» բառերով.

7) որոշման 7-րդ կետից «, բացառությամբ 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված N 2 հավելվածի 6-րդ, 8-րդ և 9-րդ գլուխների և 2-րդ կետի, որոնք ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունվարի 1-ից» բառերը հանել, իսկ որոշման N 2 հավելվածի 6-րդ, 8-րդ և 9-րդ գլուխներն ուժը կորցրած ճանաչել.

8) որոշման N 1 հավելվածի վերնագրում «ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ» բառերը փոխարինել «, ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԽՆԱՄՔԻ ՁԵՎԵՐ» բառերով.

9) որոշման N 1 հավելվածի 3-րդ կետը «կազմակերպություն):» բառից հետո լրացնել հետևյալ նախադասությամբ.

«Շահառուին տրամադրվող խնամքի ձևերն են՝ շուրջօրյա, համայնքային, տնային և ցերեկային:».

10) որոշման N 1 հավելվածի 24-րդ կետից «կամ սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված N 3 հավելվածով սահմանված ձևին համապատասխան աջակցության քարտ» բառերը հանել.

11) որոշման N 1 հավելվածի 25-րդ, 28-րդ, 29-րդ, 31-րդ, 33-րդ և 37-րդ կետերից հանել «կամ աջակցության քարտ» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը.

12) ուժը կորցրած ճանաչել որոշման՝

ա. 1-ին կետի 2-րդ ենթակետը և N 2 հավելվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ գլուխները,

բ. 1-ին կետի 3-րդ ենթակետը, 2-րդ կետը և N 3 հավելվածը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից՝ բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության, 6-րդ ենթակետի «բ» պարբերության և 12-րդ ենթակետի «ա» պարբերության, որոնք ուժի մեջ են մտնում «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետում նշված խնամքի տրամադրման նվազագույն չափորոշիչները սահմանող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

27.12.2024

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ